Ջավախք կատարած Հայրապետական այցի առիթով օծված խաչքար
Ախալքալակի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու բակում

Ախլցխայի հավատավորները ողջունում են Ամենայն Հայոց Կաթողիկոսին

Ախալքալակի Հովհ. Թումանյանի անվան թիվ 2 միջնակարգ դպրոցում

Հայ պատվիրակությունը Վահան Տերյանի արձանի առաջ

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ԱԽԱԼՔԱԼԱԿՈՒՄ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԵՏ ՀԱՆԴԻՊՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ

(14 հունիսի, 2011 թ.)

«Փառք քեզ, Աստուած, փառք քեզ.
յաղագս ամենայնի, Տէր, փառք քեզ»:

Սիրելի բարեպաշտ ժողովուրդ,

Առ Աստված փառաբանական այս մաղթանքով ճանապարհվեցինք դեպի ձեզ, եւ այսօր Մեր եղբոր՝ Վրաց Պատրիարքի հետ Ջավախքի հավատաշեն աշխարհում անսահման ուրախությամբ հանդիպում ենք հարազատ զավակներիդ մեր Սուրբ Եկեղեցու:

Ավելի քան մեկ դար է անցել այն օրերից, երբ Ամենայն Հայոց Կաթողիկոս Մկրտիչ Ա Վեհափառ Հայրապետն այցելեց սրբուհի Նունեի ոտնահետքերը կրող այս օրհնյալ երկրամասը՝ իր Հայրապետական օրհնությունը սփռելով հայության համընդհանուր ոգեւորության ու ցնծության մթնոլորտում: Այսօր էլ Մենք երջանկությունն ունենք այցելելու Ջավախքի հավատավոր Մեր զավակներիդ եւ հայոց ոսկեդենիկ լեզվով դիմելու ձեզ, որով հայ հովիվները խոսել են Սուրբ Նունեի հետ, եւ փառաբանելու Աստծուն իր բոլոր շնորհների համար, փառաբանելու մեր Տեր Հիսուս Քրիստոսին, որ այցելել է նաեւ հայ ու վրաց ժողովուրդներին, Իր Սուրբ Ավետարանով, Իր սրբերի վկայություններով հաստատել հավատքի մեջ, զորացրել ու շնորհազարդել արարումի մեջ եւ դարերի փորձությունների մեջ խնամել ու ապրեցրել փրկության հույսով: Դիմում ենք ձեզ նաեւ Մեր երջանկահիշատակ նախորդների փոխարեն, ովքեր ցանկանալով ցանկացան այցելել Ջավախք, սակայն հանգամանքները թույլատու չեղան:

Քաջալեր է այսօր Մեր հոգին, երբ տեսնում ենք Ձեր հավատարմությունը հայոց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին: Մեր Տիրոջ ու Փրկչի ապավինած, Հայ Եկեղեցու օրհնության ներքո Ջավախքի հավատավոր մեր ժողովուրդը ինչպես դարերով եղել, այնպես եւ այսօր մնում է եկեղեցասեր, հայրենասեր ու եղբայրասեր: Եղբայրսիրության պատգամը մեր Տիրոջից ունենք: Հայությունը մշտապես ստեղծարար ներկայություն է ունեցել Վրաստանում, վրաց աստվածասեր եւ հյուրընկալ ժողովրդի հետ կողք-կողքի ապրել, ուս-ուսի ստեղծել, նեղություններին ու փորձություններին միասնաբար դիմակայել: Հայոց պատմության էջերում նմանապես բազում են վկայությունները վրաց ժողովրդի եղբայրական զորակցության ու սատարումի:

Ժողովուրդների հզորության, առաջադիմության ու բարգավաճման կարեւորագույն պայմանն է միմյանց հանդեպ հարգանքն ու աջակցությունը, քրիստոսապատվեր սերն ու համերաշխությունը: Այսօր, դուք, սիրելի զավակներ Մեր, Վրաստանի լիիրավ եւ արժանապատիվ քաղաքացիներն եք, ազատ ու անկախ Վրաստանի, քաղաքացիներն եք՝ հավասար պարտականություններով ու հավասար իրավունքներով: Եւ այս իրողությունը նաեւ ձեր հզորությունն է, քանզի դուք՝ որպես հայ ժողովրդի անբաժանելի մաս, միաժամանակ կարեւոր հատվածն եք վրաց բազմազգ ու բազմամշակույթ հայրենիքի:

Առաքյալի կոչի համաձայն՝ «մաքուր սրտով ջերմորեն սիրելով միմյանց», (Ա Պետր. Ա 22) դուք, սիրելի բարեպաշտ հայորդիներ, վրացի եղբայր ժողովրդի եւ Ջավախքում ապրող այլ ժողովուրդների զավակների հետ հավատքով զորացած պիտի հաղթահարեք ձեր կյանքի դժվարություններն ու նեղությունները, բարի արդյունքներ կուտակեք, բարօր դարձնեք ապրվածպարզեւ ձեր գեղաշուք աշխարհը:

Այս ավանդաշատ երկրում ամուր մնացեք ձեր հավատքի մեջ, սիրելիներ, ձեր քրտինքով ոռոգեք այս օրհնյալ հողը, ամուր պահեք ձեր ընտանիքները, կենսունակ՝ ձեր ազգային-մշակութային հասպատությունները, լուսավոր ու պայծառ՝ հայ ինքնության ակունքները՝ դպրոցներն ու եկեղեցիները: Ձեր նվիրումով ու հոգածությամբ վկայեք, որ դուք պահապանն եք նվիրական մեր արժեքների, մեր հնագույն ու հարուստ մշակույթի: Թ-ող Վրաստանի բոլոր հայաբնակ անկյուններում հայաբարբառ հնչի Տերունական աղոթքը, եւ մեր զավակները, զորանալով երկնառաք շնորհներով՝ շարունակեն ջանք ու ներդրում բերել Վրաստանի առաջընթացին, բարօրությանն ու բարգավաճումին:

Վրաստանի ողջ հայ համայնքի հետ ջավախահայությունը իր նպաստը պիտի բերի նաեւ ազգային ու մշակութային մեր կյանքին, Հայաստանի եւ Վրաստանի բարեկամության ու համագործակցության զարգացմանն ու ամրապնդմանը: Հավատքով ու եղբայրսիրությամբ մեր հայրենիքները պիտի զորանան ու բարգավաճեն, հոգեւոր-եկեղեցական մեր կյանքը պիտի պայծառանա, եւ մեր զավակները ավելի մեծ հույսերով ու վստահությամբ պիտի նայեն գալիքին:

Մեր հանդիպման այս երջանիկ առիթով բերկրաշատ հոգով Մեր գնահատանքն ու Հայրապետական օրհնությունն ենք բերում ձեզ, սիրելի բարեպաշտ ժողովուրդ:

Աղոթում ենք առ Աստված, որ խաղաղ պահի ձեր կյանքը, առաջնորդի եւ օրհնի ձեր ընթացքը, արդյունավորի ձեր գործերը: Եւ թող Ջավախքից լսվող ավետիսները մեր բոլորի հոգիներից գոհության ու փառաբանության աղոթք բարձրացնեն երկինք ասելով՝ «Փառք քեզ, Աստուած, փառք քեզ. յաղագս ամենայնի, Տէր, փառք քեզ»:

Շնորհք եւ խաղաղութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ եւ ամենեսեան. Ամէն: